# «ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**ՆԱԽԱԳԻԾ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՕՐԵՆՔԸ**

**«ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության 2004 թվականի դեկտեմբերի 14-ի ՀՕ-43-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածը շարադել հետևյալ խմբագրությամբ.

«1. Սույն օրենքի հիմնական հասկացություններն օգտագործվում են «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված հասկացությունների իմաստով։»:

**Հոդված 2.** Օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Համայնքային քաղաքական, համայնքային վարչական, համայնքային հայեցողական պաշտոններ զբաղեցնող, ինչպես նաև տեխնիկական սպասարկում իրականացնող անձինք համայնքային ծառայողներ չեն համարվում։»:

**Հոդված 3.** Օրենքի 5-րդ հոդվածում «6-րդ» բառը փոխարինել «12-րդ» բառով:

**Հոդված 4.** Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի ա) և բ) կետերում «քաղաքական կամ հայեցողական կամ քաղաքացիական պաշտոններում» բառերը փոխարինել «քաղաքական, վարչական, հայեցողական կամ ինքնավար պաշտոններում» բառերով:

**Հոդված 5.** Օրենքի 17-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված հանրային պաշտոն զբաղեցնելու, ինչպես նաև ժամկետային աշխատանքային պայմանագրով համայնքային ծառայության պաշտոն զբաղեցնելու ժամանակաշրջանի աշխատանքային ստաժը հավասարեցվում է համայնքային ծառայության ստաժին։»:

**Հոդված 6.** Օրենքի 22-րդ հոդվածում «20-րդ» բառը փոխարինել «18-րդ» բառով:

**Հոդված 7.** Օրենքի 23-րդ հոդվածում «21-րդ» բառը փոխարինել «19-րդ» բառով:

**Հոդված 8.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: